

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԽԱՂԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԿՐԹՈՒԹԱՆՆ ԹԷՋ:

Շարունակական և վերջ:

Հասարակ խաղը շատ լատ վարժմունք է նոյնպէս երեխայի խելքի համար: Խաղը իւր բազմատեսակ երևոյթներով ստիպումէ մտածել և հնարել, բարդատել և զանազանել, հասկանալ և ըմբռնել, դատել և մակարերել, — և շատ անգամ մեր մանուկների խաղի մէջ անհամեմատ աւելի լսօժիք (տրամախոհութիւն) է լինում քան թէ մեր պաշտօնական քարոզիչների և աղատութեան ակոյեանների ուռած փրփած ձառերի մէջ: Խաղը քանի մի դէպքերի մէջ քաջութիւն է շարժում, միւս դէպքերի մէջ սովորեցնում նեղ ըրույթներին անվհերութիւն պահպանել, զգոյշ շրջահայեաց, հանդիստ լինել, զարթեցնումէ վստահութիւն և զարգացնումէ հայեցողութեան արագութիւն: Այլ ինչ որ հասակաւորներին չէք կարողանայ շուտ հասկացնել հազարաւոր վտեմ ձառերով — ազնիւ և բազդաւոր կեանքի էական հիմերը — խաղը անջնջելի պարզութեամբ տպաւորում մանուկների մէջ

Խաղից մանուկներն այն համոզումն են իւրայնում, որ մենք միակերպ մեզ հետ ձգտող մարդիկների ընկերակցութեամբ միայն կարողենք կեանքը, վայելել, որ մենք մեր ուրախութիւն և բազդաւորութիւն ենք մեծացնում, եթէ մեր ընկերակիցների սրտերի մէջ ուրախութիւն ենք զարթեցնում, որ իւր ժամանակին և վայելուչ զեջողութիւնն միայն հնարա-

ւոր է անում համաձայնութիւնը — ամեն հասարակաց գործերի և ձեռնարկութիւնների այս հիմնական պայմանը, որ ընկերական, սէրով լցված միախումբ ներգործութիւնն միմիայն հասցնումէ նպատակին, և որ հազար դէպքերի մէջ սա է միմիայն միջոց տալիս նպատակին հասնելու: Այս շատ հասարակ, շատ ընդհանրացած, բայց մի և նոյն ժամանակ անսահման նշանաւոր և մեծ կանոններին են ուղղում անդադար մանուկն նորա խաղերը: Այլ եթէ այս կանոնները պարզ ձանաչելի չեն դառնում երեխայի համար, չեն թափանցում նորա համոզման մէջ և չեն հասունանում նորա հետ, սա ձեր յանցանք է, ձեր ծուլութեան և անհոգութեան գործ է:

Խաղը բոլոր ունուցիչներէց և դաստիարակներից ամենայաջողն և ամենազերազանցն է: Խաղը ընծայ չէ, պատահական բան չէ, խաղը երեխայի գործ է, նորա առօրեայ աշխատանքն է: Խաղալով երեխան բնութեան օրէնքներին է հետեւում, իւր սուրբ իրաւունքից է շահվում, իւր ոյժերի զարգացման պայմաններից մինն է կատարում: Ամեն բանից առաջ և ամեն բանից աւելի երեխան պիտի խաղայ, երեխան: Բայց երեխայ, ասելով ի՞նչ պիտի հասկանանք տարիների կողմից: Մինչև որ ժամանակն շարունակվումէ այն հասակը, որի աշխատութիւնն խաղ է: Պատասխանումմեմ, որքան կարելի է աւելի երկար ժամանակ շարունակելու է այս հասակը: Այլ զուր կիրառողանաք թողնել, որ երեխան երեխայ լինի մինչև տասն վեց տասն եօթ տարեկան հասակը, — երանի ձեզ, երանի


ձեր երեխային: Վուք հանգիստ եղէք, մանկական սէրը դէպի խաղը կիմանայ իւր համար վայելուչ սահմաններ և պատշաճաւոր արտայայտութիւն գտնել: Խաղին ուրիշ պարագմունք կմիանան, խաղերը ուրիշ ձևեր կստանան. զնտակով խաղալու, հասարակ վազվզելու փոխանակ կսկսեն կրիկեա խաղալ, բայց չե փոխվել խաղի այն զօրութիւնը, որ կրթող է խելքի և սրտի:

Եւ եթէ խաղը արդարեւ, ինչպէս ասացի, առօրեայ աշխարհումն է, և ոչ թէ ժամանակի զուր կորուստ (ինչպէս սովորաբար լինումէ) ուստի խաղը երեխայի ոյժերին համապատասխան աշխարհումն պիտի լինի: Իսկ իւրաքանչիւր աշխատութեան հետեանքը որ և իցէ օգտաւետութիւն, մարդին պիտանի որ և իցէ գործ պիտի լինի: Մանկական աշխատութիւնը մի և նոյն է: Բայց զնտակ խաղալը կամ աննպատակ վազելը կարող է արդեօք որ և իցէ օգտաւետութիւն համարվել: Ողբա միայն մարդումեն մկանուններ կամ բազուկներ, Աւրեմն սա աշխատութիւն չէ, այլ մկանունների մարդումն:

Եթէ մենք կամենումենք—իսկ կամենալ այս մենք այն պարտաւորենք—որ մանուկներէ խաղը նոցա աշխարհումն լինէր. մանկական գործունէութիւնը անշուշտ ուղղելու ենք օգտաւետութեան հետեւանքին, Այն ըուպից, երբ երեխան սկըսումէ իւր միտքը բառերով յայտնել, նա արդէն պիտի աշխատէ,—և աշխատէ այս բառի բուն նշանակութեամբ: Թոյլ տուէք նոքան կատարել այն ինչին որ ոյժը կհասնէ: Աորա աշխատութիւնը այնպէս

ձևակերպեցէք, որ երեխան աշխատելով զարգացնէր բոլոր իւր ընդունակութիւնները: Բայց թող նորա իւրաքանչիւր աշխատութիւնը վերջանայ օգտաւետ գործով որ օգտաւետ լինէր իւրան կամ իւրան շրջապատողներին, ինչպէս վերեւ ասվեցաւ: Ահա կրթութեան առաւել փմաստուն եղանակը: Սա դժուար է և մենք սովոր չենք այս եղանակին. բայց «ս. և միմայն սա է կարևոր: Եւ այս եղանակը այնքան շատ դժուար ևս չէ: Վախաւորն սորա սկիզբներ սեպհակամայններն է: Իսկ գործնապէս իրագործելու հնարագիտութիւնը քիչ թէ շատ իւրաքանչիւր ցանկացողը կունենայ: Աւերջապէս նոյն ինքն դժուարութիւնը իւր գեղեցկութիւններ ունի, այն մեծամեծ հետեւանքներն աչքի առաջ ունենալով, որոց կարող է հասցնել այս եղանակը.

**Ինչպէս Կարգապէս Ստեփանէ:**



ԱՅՅՈՅ ԼԵՂՈՒԻ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԳԻՏԵԱԿԱՆ  
ՆԵԱՆԱԿՈՒԹԻՒՆԵՐԻ  
(Տարւանակումն):

Ինչպէս և լինի՝ Հայոց պատմաց կարևորութիւնը հին ժամանակի նկատմամբ դոնէ անժխտելի է նոցա այն արժանաւորութիւնը, որ նոքա իրենց պատմելի իրողութեանց և պատահարաց մէջ աւելի խիստ և մեծ զգուշութեամբ ընտրողութիւն են արել, նշանաւոր կարևորութիւն չունեցող շատ քիչ գործեր են յառաջադրում, և իրենց հեղինակութեանց ու գրուածոց ոճի ուղղութեան և մշակման աւելի ջանադիր են եղեր քան